**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԲԸՀԱՇՁԲ-14/13 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2014 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/13 պայմանագրում 2018 թվականի ապրիլի 12-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | Կապալառուի կողմից ներկայացրած գրություն և պատասխանատու ստորաբաժանման առաջարկություն: |
| Փոփոխության նկարագրություն | ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/13 պայմանագրի կատարման համար նախատեսված կանխավճարի գումարի փոփոխություն: |
| Փոփոխության հիմնավորում | N ԲԸՀԱՇՁԲ-14/13 պայմանագրի 8.4 կետ: |

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

## 01.12.2014թ. կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/13 պետական գնման պայմանագրի

ք. Երևան 12 ապրիլի 2018 թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Բաղրամյանշին>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Գ. Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով Կողմերի միջև 01.12.2014թ. ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների իրականացման համար կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/13 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1. Կողմերը որոշեցին Պայմանագրի 2018 թվականի փետրվարի 14-ին կնքված N 3 համաձայնագրի 1.2 կետի <<6000000 (վեց միլիոն)>> բառերը փոխարինել <<29000000 (քսանինը միլիոն)>> բառերով:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պ ա տ վ ի ր ա տ ո ւ՝ | Կ ա պ ա լ ա ռ ո ւ՝ |
|---|---|
| <<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ | <<Բաղրամյանշին>> ԲԲԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ | ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լոռնագոգ |
| Կառավարական տուն 3 | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | Հ/Հ 115004673956 |
| աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՎՀՀ 04600132 |
| Հ/Հ 900011011971 | |
| ՀՎՀՀ 02565827 | |

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Տնօրեն՝

_____ Գ. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ.